



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ք. Ալավերդի, Հորավար Անդրանիկ 8/1
☎ (253) 2-41-00, E-mail: alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » ՀՈՒՆԻՍԻ 2020 թվական, N 54-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱՃԱՃԿՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԳՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման 8-րդ հոդվածով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին **ո ր ո շ ու մ է.**

1. Թույլատրել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն հանդիսացող, Կաճաճկուտ գյուղի վարչական տարածքում գտնվող (06-054-0113-0015 ծածկագրով), 0.2721 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այգու նկատմամբ կայացնելու վարձակալության իրավունքի մրցույթ:
2. Հաստատել վարձակալության տարեկան մեկնարկային վճարը՝ 25000 դրամ, սահմանել՝ մրցույթի մասնակցության վճար 15000 դրամ, քայլի չափ՝ մեկնարկային վճարի 5%-ի չափով:
3. Գյուղատնտեսական նշանակության այգին տրամադրվում է վարձակալության 25 (քսանհինգ) տարի ժամանակով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	Արտուշ	Արեյան			
2.	Արթուր	Դավթյան			

3.	Արմեն	Կարապետյան			
4.	Սեյրան	Հովհաննիսյան			
5.	Ալիկ	Նասիրյան			
6.	Դավիթ	Նունիսյան			
7.	Սվետլանա	Պետրոսյան			
8.	Վալերի	Վարոսյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ս.Գ. ԽԵՉՈՒՄՅԱՆ